Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24-ի N 920 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է շարունակել վերանորոգել, վերակառուցել և պահպանել Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու տարածքը՝ այն դարձնելով հանգստի և ժամանցի գոտի Երևանի քաղաքային համայնքի բնակիչների համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյաններ հիմնադրամի, Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին:
4.	Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամ, հասցեն՝ քաղ.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ 01245672:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառ	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Երևան քաղաքի Հալաբյան փողոցին հարող Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու տարածքում՝ քաղաքաշինության բարեկարգման և կանաչապատման ոլորտում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն 2020-2022 թթ-ի համար կազմում է 285,640,000 (երկու հարյուր ութսունհինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020թ-ի հունվարի 1-ից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

		1. Այգու տարածքի լուսավորության իրականացում – 24,000,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում 2. «Համայնքային այգի» ծրագրի իրականացում («համայնքային այգի» ծրագիրը նախատեսված է այգու առավել անբարեկարգ հատվածներում՝ հիմնականում զառիթափներին գտնվող հատվածներում, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան համայնքի բնակիչներին խնամել այգու այդ հատվածները և օգտվել խնամքի արդյունքում ստացված բարիքներից՝ միրգ, բանջարեղեն և այլն) – 24,000,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում 3. Այգում աշխատող անձնակազմի աշխատավարձ - 122,400,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում 4. Կոմունալ, պահնորդային, մաքրարական ծառայությունների ձեռքբերում – 85,000,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում 5. Այգու ընթացիկ պահպանման ծախսեր – 30,240,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու¬թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները և ծառայությունները. • Լուսավորության և «Համայնքային այգի» ծրագրի իրականացման նպատակով՝ նյութերի, սարքավորումների, ծառայությունների և իրականացվելիք աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 38,400,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում • Լուսավորության և «համայնքային այգի» իրականացման նպատակով՝ նյութերի, սարքավորումների, ծառայությունների և իրականացվելիք աշխատանքների ձեռքբերում և ներմուծում արտերկրից – 9,600,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում • Կոմունալ, պահնորդային, մաքրարական ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից – 85,000,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում • Այգու ընթացիկ պահպանման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում ՀՀ-ից – 18,144,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում • Այգու ընթացիկ պահպանման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում և ներմուծում արտերկրից – 12,096,000 դրամ՝ 2020-2022թթ-ի ընթացքում:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն կատարվելու:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Երևան համայնքի հետ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ